

025

Դ-68

Ներդրված է Հրազարանային կառու-  
թյունների կազմակերպումը մասնաշաղկա-  
զրազարաններում՝ ձեռնարկի մեջ:

27 MAY 2009

# ԻՆՉՊԵՍ ՕԳՏՎԵԼ ԿԱՏԱԼՈԳՆԵՐԻՑ

Օգնությունը ընթերցողին



ՀԱՅԿ. ՍՍՌԻ ԱԼ. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱԿԱՆ ԳՐԱԳԱՐԱՆ  
ԵՐԵՎԱՆ 1957

11653

ԿԱՏԱԼՈԳԸ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ ԵՂԱԾ ԳՐՔԵՐԻ ՅՈՒՅԱԿՆ Է

Գրադարանային կատալոգները կազմված են քարտերից: Գրադարանում եղած ամեն մի գիրք կատալոգում ունի իր քարտը:

Յուրաքանչյուր քարտի վրա գրված են մի որևէ գրքի մասին տեղեկություններ՝ հեղինակ, վերնագիր, հրատարակության տեղ, րիվ, էջերի քանակը և այլն:

Կազմեց՝ Ռ. ԻՇԽԱՆՅԱՆ



116953-58

ГОСУДАРСТВЕННАЯ РЕСПУБЛИКАНСКАЯ  
БИБЛИОТЕКА АРМ. ССР  
ИМ. АЛ. МЯСНИКЯНА

КАК ПОЛЬЗОВАТЬСЯ КАТАЛОГАМИ

В помощь читателю

Вкладка в пособие „Организация каталогов  
в массовых библиотеках“.

(На армянском языке)

Ереван — 1957

1Փ	Նալբանդյան Մ.
Ն 19	Ներկացուծությունը որպես ուղիղ ճանապարհ: Սբ., Հայկեսհրատ, 1954. 112 էջ:
	1Փ

Նրան գրքի վրա հեղինակը նշված չէ, կամ գիրքն ունի շորս, հինգ և ավելի հեղինակներ, քարտի վրա այդ գիրքը նկարագրված է լինում վերնագրի տակ:

С	Նեմանի ափին: [Լիսվական գրողների ստեղծագործությունների յաղովածու]: Սբ., Հայկեսհրատ, 1956. 136 էջ:
Ն 52	С (լիավ)

Պաշտոնական հրատարակությունները, պարտիայի և կառավարության որոշումները, պարտիայի համագումարների նյութերը նկարագրված են կազմակերպությունների կամ պետական օրգանների անվան տակ:

ՅՔՈ	ՍՄԿԳ:
Ս11	Սովետական Միության Կոմունիստական պարտիայի կանոնադրություն: Ընդունված պարտիայի 19-րդ համագումարի կողմից (մասնակի վավորություն): մեջվել են ՍՄԿԳ 20-րդ համագումարի կողմից): Եր., Հայպետհրատ, 1957. 108 էջ:
	ՅՔՈ

Կատալոգներում կան ձեռագիր և տպագիր քարտեր: Տպագիր քարտերն էլ կազմված են նույն սկզբունքով, ինչ որ ձեռագիր քարտերը, միայն գրքերի նկարագրություններն այնտեղ ավելի մանրամասն են:

Ար Ք98	Քուչակ, Նահապետ: Հայրենի կարգավ: [Բանաստեղծութ.: Կազմեց և առաջարան գրեց Ա. Ղուկասյան]: Ե., Հայպետհրատ, 1957: 348 էջ, 20 սմ. 15.000 օր. 7 ա. 10 կ. կապույտ:
Кучак, Наапет.	Стихи. [Сост. Ав. Гукасян]. Е., АБ-петрат, 1957.
№ 262 [57-467] 26-2	Հայկ. ՄՍՈ Գեոգրապլատ 19 VII 57

Տպագիր քարտ:

Կատալոգների բոլոր քարտերի վրա, վերևի ձախ անկյունում կոտորակի ձևով գրված թվանշաններն ու տառերը պայմանական նշաններ են, որոնք ցույց են տալիս տվյալ գրքի տեղը դարակներում: Այդ պայմանական նշանները կոչվում են շիֆր: Շիֆրի օգնությամբ դրադարանավարը կգտնի ձեռ ցանկացած դիրքը դարակում:

ՄԵՐ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ ԿԱՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱՏԱԼՈԳՆԵՐԸ

1. Հայերեն այբբենական կատալոգ
2. Ռուսերեն այբբենական կատալոգ
3. Հայերեն սիստեմատիկ կատալոգ
4. Ռուսերեն սիստեմատիկ կատալոգ

ԻՆՉՊԵՍ ՕԳՏՎԵԼ ՍԻՍՏԵՄԱՏԻԿ ԿԱՏԱԼՈԳԻՑ

Սիստեմատիկ կատալոգի միջոցով դուք կարող եք իմանալ, թե ձեզ հետաբերող հարցի մասին ինչ գրքեր կան գրադարանում:

Սիստեմատիկ կատալոգում կան բաժիններ: Ամեն մի բաժնում հավաքված են գիտության որևէ ճյուղի կամ թեմայի նվիրված գրքերի քարտեր: Ցուրաքանչյուր բաժին ունի իր անունը և պայմանական նշանը, որը կոչվում է ինդեքս, օրինակ՝

63 Գյուղատնտեսություն

Այստեղ 63-ը տվյալ բաժնի ինդեքսն է, իսկ «Գյուղատնտեսություն»՝ բաժնի վերնագիրն է:

Սիստեմատիկ կատալոգում կան գլխավոր բաժիններ և ենթաբաժիններ:

- 0 Ընդհանուր բաժին
- 1 Փիլիսոփայություն: Հոգեբանություն: Տրամաբանություն
- 2 Գիտաարեխտական պոպուլյարացիա
- 3K Մարքսիզմ-լենինիզմ
- 3 Քաղաքական-հասարակական գրականություն
- 4 Լեզվաբանություն
- 5 Բնագիտություն և մաթեմատիկա
- 5A Մարդաբանություն: Մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա
- 61 Թժշկություն: Առողջապահություն
- 6 Տեխնիկա
- 63 Գյուղատնտեսություն
- 7 Արվեստ
- 7A Ֆիզկուլտուրա և սպորտ
- 8 Գրականագիտություն
- 9 Պատմություն
- 91 Աշխարհագրություն

Գեղարվեստական գրականություն

Այս բաժինները-սիստեմատիկ կատալոգում ունեն իրենց ենթաբաժինները, օրինակ.

91 Աշխարհագրություն

- 91(C) ՍՍՌՄ աշխարհագրություն
- 91(C43) Հայաստանի աշխարհագրություն
- 91(V) Արտասահմանյան երկրների աշխարհագրություն
- 912 Գեոգրեզիա: Տեղագրություն: Քարտեզագրություն

Կատալոգում որոշ ենթաբաժիններ իրենց հերթին ունեն բաժանմունքներ:

Սիստեմատիկ կատալոգում յուրաքանչյուր բաժնի կամ ենթաբաժնի սկզբում դրված է սովորաթղթի վրա բաժանարար, որի վրա դրված է սովորաբար բաժնի անունը և ինդեքսը:

Գլխավոր բաժինների առջևում դրված են կենտրոնական ելուստ ունեցող բաժանարարներ: Ենթաբաժինների սկզբում դրված են կողքի (աջ կամ ձախ) ելուստով բաժանարարներ:

Սիստեմատիկ կատալոգի յուրաքանչյուր արկղ ունի պիտակ, որի վրա դրված են այդ արկղում եղած բաժինների անուններն ու ինդեքսները:

Յուրաքանչյուր բաժանարարի հետևում քարտերը դասավորված են այբբենական կարգով, միայն, եթե սովորաբար կան մարքսիզմ-լենինիզմի կլասիկների աշխատություններ կամ պարտիայի և կառավարության որոշումներ, ապա դրանք դրված են բաժնի բոլոր քարտերի սկզբում:

Քե ուզում եմ իմանալ, քե ինչ գրքեր կան գրադարանում ձեզ հետաքրքրող հարցի մասին պետք է սիստեմատիկ կատալոգում փնտրեմ ու գտնեմ այդ հարցին վերաբերող բաժինը և մեկ առ մեկ նայեմ այնտեղ հավաքված քարտերը:

Ձեր ընտրած գրքերի մասին հայտնեցեք գրադարանավարին: Կալ կլինի, որ թղթի վրա գրեք ամեն մի ընտրված գրքի հեղինակի ազգանունը, վերնագիրն ու շիֆրը և ցույց տաք գրադարանավարին:

ԻՆԶՊԵՍ ՕԳՏՎԵԼ ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ԿԱՏԱՆՈՒԹԻՑ

Քե դուք ուզում եմ իմանալ, քե ձեր ցանկացած ուրեկ գիրքը գրադարանում կա, քե ոչ, նայեցեմ այբբենական կատալոգում: Եթե ձեզ հետաքրքրող գիրքը հայտնի է նայեցեք հայտնի այբբենական կատալոգում, եթե ուտերեն է՝ ուտերեն այբբենական կատալոգում:

Դրա համար դուք պետք է իմանաք ձեր ուզած գրքի

Ե

հեղինակի ազգանունը, վերնագիրը և հայերեն կամ  
ռուսերեն տառերի այբբենական հերթականությունը:

Այբբենական կատալոգում գրեթե բոլոր գրքերի  
քարտերը դասավորված են հեղինակների ազգանուննե-  
րի խիստ այբբենական կարգով, որոշ գրքերի՝ քարտեր  
էլ դրված են ըստ վերնագրերի այբբենի<sup>1</sup>:

- Նալբանդյան Մ.
- Նեմանի վրա
- Ներսիսյան Ա.
- Նիզամի
- Նովիկով-Պրիբոյ Ա. Ս.
- Նոր պատմություն
- Նորենց Վ.

Ռուսերեն այբբենական կատալոգում քարտերը  
դասավորված են ռուսերեն այբբենի հերթականությամբ:

- Калинин М. И.
- Капутикян С.
- Короленко В. Г.
- КПСС
- Краткий справочник...
- Купер Ф.

Միևնույն հեղինակի գրվածքները դասավորված են  
այդ գրվածքների վերնագրերի այբբենական կարգով,  
միայն այդ կարգից դուրս, ամենից առջևում դրված են  
հեղինակի երկերի լիակատար ժողովածուները, երկերը  
ընտիր երկերը, օրինակ.

- Նալբանդյան Մ. Երկերի լիակատար ժողովածու
- » Երկեր
- » Ընտիր երկեր
- » Բանաստեղծություններ

<sup>1</sup> Զորս և ավելի հեղինակ ունեցող կամ բանհեղինակ գրք-  
քերի քարտերը:

- Նալբանդյան Մ. Երկրագործությունը որպես ու-  
ղիղ ճանապարհ
- » Երկու տղ
- » Կրիտիկա «Սոս և Վարդիթերի»:

Այբբենական կատալոգում նույն տառով սկսվող  
քարտերի սկզբում դրված է բաժանարար, որի վրա  
գրված է համապատասխան տառը (Ա Բ Գ Դ Ե և այլն):

Այբբենական կատալոգում նախ պետք է գտնել  
այն տառով բաժանարարը, որով սկսվում է ձեր ցան-  
կացած գրքի հեղինակի ազգանունը: Ապա այդ բաժա-  
նարարի հետևում դրված քարտերի մեջ պետք է փնտրել  
ավելի հեղինակի ազգանունը, որը պետք է լինի իր որո-  
շակի տեղում (խիստ այբբենական դասավորությամբ):

Հայերեն այբբենական կատալոգից օգտվելիս պետք  
է լավ իմանալ հայերեն այբբենի հերթական կարգը կամ  
ձեռքի տակ ունենալ այդ այբբենը:

Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ Ժ Ի Լ Խ Ծ Կ Զ Է Ը Մ Յ Ն Շ Ո Չ Պ  
Ջ Ռ Ս Վ Տ Բ Յ Ո Ի Փ Գ Լ Օ Ֆ:

Ռուսերեն այբբենական կատալոգից օգտվելիս  
պետք է ձեռքի տակ ունենալ ռուսերեն այբբենը:

А Б В Г Д Е Ж З И К Л М Н О П Р С Т У Ф Х Ц Ш  
Щ Ъ Ы Ь Э Ю Я

Երբ այբբենական կատալոգում գտնում եք ձեր  
փնտրած գրքի քարտը, պետք է գրադարանավարին ա-  
սեք նրա հեղինակի ազգանունը, վերնագիրն ու շիֆրը:  
Այբբենական կատալոգում էլ (ինչպես սխտեմատի-  
կում) գրքի շիֆրը ցույց է տալիս նրա տեղը դարակ-  
ներում և գրված է ֆուտի վերևի ձախ անկյունում:

Եթե ձեր ցանկացած գրքի հեղինակի ազգանունը  
լավ չեք հիշում՝ դիմեցեք սիստեմատիկ կատալոգին:  
Այնտեղ պետք է նայել գիտության կամ կուլտուրայի  
այն բնագավառի բաժնում, որին որ նվիրված է ձեզ  
հետաքրքրող գիրքը: Օրինակ, եթե դուք որևէ հայ գրողի  
գիրք եք փնտրում պետք է նայեք սիստեմատիկ կատա-  
լոգի հայ գրականության բաժնում, եթե այդ գիրքը  
բժշկական գիրք է պետք է նայեք բժշկության բաժնի-  
նը և այլն:

Երբ գծվարանում եք գրադարանի կատալոգներից  
օգտվել, դիմեցեք գրադարանավարին:

Կատալոգների հետ վարվեցեք խնամքով:

Քարտերը կատալոգից հանելը խիստ արգելվում է:



